

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ (ԵԳՏԱԾ)

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բովանդակություն

I. Նախադրյալներ	3
II. Ծրագրի հակիրճ նկարագիր	4
III. Ծրագրի ընդհանուր նպատակը	5
IV. Սույն առաջադրանքի հատուկ նպատակը.....	6
V. ԿԳԳ ՎՎ նպատակը, շրջանակը և մեթոդաբանական մոտեցումը	6
VI. Աշխատանքներ.....	8
VII. Տևողություն, ներկայացման ենթակա փաստաթղթեր և ներկայացման ժամկետներ	11
VIII. Փորձագետներ (բոլոր փորձագետների համար գնահատվում է 17 մարդ/ամիս)	12
IX. ՀԱՎԵԼՎԱԾ I. ՈԲՓՄՀ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ	15

ԱՌԱՋԱՂԲԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը փնտրում է Ծառայություն մատուցող՝ Ծրագրի շրջանակում «Կայուն գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ վերապատրաստողների վերապատրաստում» (ԿԳԳ ՎՎ) իրականացնելու նպատակով:

I. Նախադրյալներ

2012-2025 թթ. Հայաստանի զարգացման ռազմավարության (ՀՁՌ) համապարփակ ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հաստատելով, որ գյուղատնտեսությունը և գյուղական տարածքների զարգացումը կարևոր դեր են խաղում տնտեսության բազմազանեցման, աշխատատեղերի ստեղծման և աղքատության կրճատման գործում, դիմել է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամին՝ գործարկելու համալիր ծրագիր, որն ուղղված կլինի կայուն գյուղատնտեսական գործելակերպի հաստատմանը՝ հողերի պահպանման միջոցառումների խթանման, ջրի հավաքման և ոռոգման մեթոդների բարելավման, ինչպես նաև գյուղական ֆինանսավորման հասանելիության բազմազանեցման միջոցով:

Այս համատեքստում ՀՀ կառավարությունը, համագործակցելով ԳԶՄՀ-ի հետ, ձեռնարկել է «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիրը» (ԵԳՖԱԾ): Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակն ընտրված գյուղական տարածքներում, որտեղ աղքատությունը տարածված է, հետևյալ ուղիներով.

(i) փոքրածավալ տնտեսությունների արտադրողականության, հետարտադրական գործընթացների արդյունավետության բարձրացում և անցում բարձրարժեք մշակաբույսերի աճեցմանը, (ii) գյուղմթերքներ վերամշակող կազմակերպությունների և գյուղացիական փոքր ու աղքատ տնտեսությունների միջև կապի հաստատում՝ նրանց համար հասանելի դարձնելով տեղական ու միջազգային շուկաները և ստեղծելով զբաղվածության հնարավորություններ աշտեղծայի շրջանակում, (iii) տեղումների մակարդակի տատանումների նկատմամբ գյուղատնտեսական արտադրական համակարգերի ճկունության բարձրացում և (iv) սննդի անվտանգության բարելավում՝ ապահովելով գյուղատնտեսական արտադրանքի և ընտանեկան առողջապահության որակի բարձրացում՝ տնային տնտեսությունների ջրամատակարարման բարելավման միջոցով, (v) փոքրածավալ տնտեսություն վարող ֆերմերների եկամտի և ակտիվների ավելացում՝ հողերի կայուն կառավարման համակարգերում և տեխնոլոգիաներում ներդրումների միջոցով:

ԵԳՖԱԾ-ը ներառում է 4 հիմնական բաղադրիչ. (i) Գյուղական ֆինանսավորում, (ii) Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ (ԳՏՁԵ), (iii) Ֆերմերների իրազեկում և աջակցություն և (iv) Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում (ՀԱԱՈւՀԿԿ, SLMIP):

- **Գյուղական ֆինանսավորում բաղադրիչը** վերաֆինանսավորման կապիտալ և բաժնեմասնակցային ներդրումներ է տրամադրում փոքր հողատերերին և ՓՄՁ-ներին՝ արտադրական գործունեությունը բարելավելու, ակտիվացնելու և եկամուտները բարձրացնելու նպատակով:
- **Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ (ԳՏՁԵ) բաղադրիչն** ուղղված է գյուղական համայնքներում կենցաղային և ոռոգման նպատակների համար ջրի հասանելիության բարելավման պահանջին:
- **Ֆերմերների իրազեկում և աջակցություն, Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում բաղադրիչները** թիրախավորում են ֆերմերներին՝ հողերի կայուն կառավարման համակարգերում, տեխնոլոգիաներում և կարողությունների զարգացման ոլորտում ներդրումների միջոցով:
-
- **Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում բաղադրիչը** ֆերմերներին հնարավորություն է տալիս բարձրացնել Հայաստանի ռիսկային շրջաններում գտնվող գյուղական համայնքների ընդհանուր ճկունությունը:

Ծրագրի ամբողջական փաստաթուղթը հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.raed.am:

II. Ծրագրի հակիրճ նկարագիր

Ընթացակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիրը՝ բազմոլորտ նախաձեռնություն է, որն առաջարկում է համալիր գործիքներ՝ բարձրացնելու Հայաստանի ռիսկային տարածքներում գյուղական համայնքների ընդհանուր ճկունությունը՝ (i) հիմնական սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների բարելավման, (ii) արտոնյալ պայմաններով ֆինանսավորման տրամադրման, (iii) թիրախային հանդիսացող բարձրարժեք ագրոանտառային և բանջարաբուստանային մշակաբույսերի մշակության ոլորտում հողի և ջրի պահպանման միջոցների ինտեգրման և (iv) ծրագրի համայնքային տարածքներում հողերի դեգրադացման և կլիմայական ռիսկերի նկատմամբ ագրո-էկոհամակարգերի և գյուղական բնակչության ճկունության վերականգնման նպատակով:

Ծրագիրը հատուկ ուշադրություն է դարձնում կայուն գյուղատնտեսական գործելակերպի զարգացմանը՝ թիրախային համայնքներում խոցելի խմբերի ճկունությունը բարձրացնելու նպատակով և նրանց հնարավորություն ընձեռելու բարելավել ու զարգացնել իրենց գյուղատնտեսական արտադրանքը գործիքների, մեթոդների, կարողությունների և կայուն

գյուղատնտեսական համակարգերում ու տեխնոլոգիաներում ներդրումների ճանապարհով: Դա իրականացվելու է ստորև ներկայացված աշխատանքների միջոցով.

Վերականգնված ոռոգման ենթակառուցվածքներից օգտվող կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում ներդրումներ (i) հիմնականում կկիրառեն կլիմայի փոփոխությունների նկատմամբ կայուն տեխնոլոգիաներ ելակետային ծրագրով վերականգնված երրորդային ոռոգման համակարգերում և (ii) կաջակցեն մարզինալ հողերի փոխարկմանը կլիմայական ռիսկերի նկատմամբ ճկուն գյուղատնտեսական հողերի, որոնք կառավարվում են արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաներով և հողի ու ջրի պահպանման ագրոնոմիական համակարգերով: Առավելապես ոռոգման ջրով ապահովված լինելու արդյունքում բարձրարժեք բանջարաբուստանային մշակաբույսերի բազմազանեցման շնորհիվ է, որ աղքատ տնային տնտեսությունները կարող են դառնալ ավելի ճկուն, կանխել հողերի քայքայումը և նվազեցնել կլիմայական ռիսկերը, ինչն ազդում է ինչպես մարդկանց կյանքի, այնպես էլ ունեցվածքի վրա:

Ենթակառուցվածքների վերականգնման ծրագրերի ֆինանսավորումից և թիրախային արժեշղթաների զարգացմանն ուղղված ֆինանսավորման փաթեթներից տրամադրելուց բացի, անհրաժեշտ է շահառու ֆերմերներին աջակցել կայուն գյուղատնտեսական համակարգերի կիրառման վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու և զարգացնելու գործում, ինչը կնպաստի ընդհանուր բարեկեցությանը՝ տնտեսապես արդյունավետ ու շահավետ և սոցիալապես պատասխանատու կերպով ապահովելով բավարար քանակությամբ պարենային և այլ ապրանքներ ու ծառայություններ՝ միևնույն ժամանակ բարելավելով շրջակա միջավայրի որակը:

Ակնհայտ է, որ միայն գիտելիքների, դերակատարների, տեխնոլոգիաների և հարակից ներդրումների համադրությունը կարող է խթանել վարքագծային փոփոխություններ, որոնք կօգնեն հասնել կայուն զարգացման նպատակներին:

III. Ծրագրի ընդհանուր նպատակը

Գիտելիքն ու նորարարությունը կարևոր դեր են խաղում խոշոր մարտահրավերներին դիմակայելու գործում՝ ֆերմերներին և գյուղական համայնքներին աջակցելու հարցում: Կայուն գյուղատնտեսական գործելակերպի ներդրումը ծավալուն գիտելիքներ պահանջող գործընթաց է, որն իրականացնելու համար Ծրագիրը նպատակ ունի ներգրավել ԾՄ-ի՝ մշակելու և անցկացնելու թիրախային Վերապատրաստման դասընթաց, որը կայուն գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ ուսուցման նոր եղանակներ կներդնի շահառուների շրջանում: Դասընթացի ակնկալվող արդյունքների շարքում են պարենի և սննդի անվտանգության երկարաժամկետ բարձրացումը, շրջակա միջավայրի նկատմամբ խնամքի և ի նպաստ կլիմայի գործողությունների խթանումը, գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական կառուցվածքի ամրապնդումը:

IV. Սույն առաջադրանքի հատուկ նպատակը

Առաջադրանքի հատուկ նպատակը վերականգնված ոռոգման համակարգերի շահառուների շրջանում կայուն գյուղատնտեսության վերաբերյալ գիտելիքների ստեղծումը կամ ամրապնդումն է՝ Վերապատրաստողների վերապատրաստում անցկացնելու միջոցով: Ակնկալվում է, որ ՎՎ-ն հաջողությամբ ավարտելուց հետո, վերապատրաստված դասընթացավարները դասընթացը կվերարտադրեն իրենց համապատասխան հաստատություններում և կազմակերպություններում համագյուղացիների և գործընկերների համար՝ ստեղծելով ձևագնդի էֆեկտ և առաջ բերելով կուտակային փոփոխություններ:

Ելնելով վերը նշվածից՝ Ծրագիրը մտադիր է ընտրել խորհրդատու/ծառայություն մատուցող՝ 5-ամսյա ժամկետում վերոնշյալ նպատակի իրականացմանն աջակցելու, մասնավորապես՝ թիրախային շահառուների հայտնաբերման, նրանց կարիքների ուսումնասիրության, պահանջների հիման վրա ուսումնական մոդուլների հանգամանակից մշակման, շահառուների կարողությունների ստեղծման և դասընթացավարների ցանցի ստեղծման միջոցով՝ դասընթացի ազդեցության պահպանումն ապահովելու նպատակով:

V. ԿԳԳ ՎՎ նպատակը, շրջանակը և մեթոդաբանական մոտեցումը

ԾՄ-ն պետք է մշակի և անցկացնի կայուն գյուղատնտեսական գործելակերպի, համակարգերի և տեխնոլոգիաների վերաբերյալ Վերապատրաստողների վերապատրաստման (ՎՎ) դասընթաց: Դասընթացը նաև կծառայի որպես հարթակ, որը մասնակիցներին կծանոթացնի կայուն գյուղատնտեսության ոլորտում ընթացիկ գլոբալ միտումներին, և թե ինչպես կարող է ԿԳԳ գործելակերպին հետևելը անհատներին, կազմակերպություններին և համակարգերին ընձեռել կարողություններ՝ շուկայի փոփոխվող պահանջներին բավարարելու համար:

ԾՄ-ն պետք է սերտորեն համագործակցի ԾԻԳ-ի համակարգողների թիմի հետ և բոլոր համապատասխան փաստաթղթերն ու նյութերը ներկայացնի ԾԻԳ-ի համաձայնությանը և հաստատմանը:

Թիրախային տարածք: Դասընթացը կանցկացվի 13 համայնքներում, որտեղ 2016-2020 թվականներին ԵԳՖԱԾ ծրագրի շրջանակում վերականգնվել են ոռոգման բաշխման փոքր համակարգեր: Համայնքների ցանկը բերվում է Հավելված 1-ում:

Վերապատրաստվողներ: ՎՎ-ն պետք է մշակվի և անցկացվի տեղական համայնքներում որոշումներ կայացնողների, պաշտոնյաների, գիտասփյուռ ծառայությունների աշխատակիցների, համալսարանների/քոլեջների դասախոսների, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում տեխնիկական խորհրդատվության և խորհրդատվական ծառայությունների բնագավառում գործող

և/կամ գյուղատնտեսական ծրագրեր իրականացնող ակտիվ ՀԿ-ների և ֆերմերային խմբերի/ասոցիացիաների/կոոպերատիվների ներկայացուցիչների համար:

Դասընթացի մեթոդաբանություն: Դասընթացը պետք է մշակվի որպես Վերապատրաստողների վերապատրաստում (ՎՎ)՝ հիմնվելով մասնակիցների կարիքների գնահատման վրա: Դասընթացի շնորհիվ մասնակիցները պետք է տիրապետեն կայուն գյուղատնտեսական գործելակերպի, համակարգերի և մեթոդաբանության վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների ու հմտությունների:

Դասընթացը պետք է օգտագործի մասնակցային և մեծահասակների ուսուցման մեթոդներ՝ վերապատրաստվողների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար: Դասընթացը պետք է հիմնված լինի «Մովորել անելով» սկզբունքի վրա և բավարարի վերջնական օգտատերերի կարիքներին ու պահանջներին՝ նախ և առաջ մասնակիցներին տրամադրելով խնդիրը հասկանալու համար ամուր տեսական հիմք, ապա հնարավորություն տալով կիրառել այդ գիտելիքները գործնական վարժությունների և խմբային աշխատանքի միջոցով:

Պետք է կիրառվեն ուսուցման ինտերակտիվ տարատեսակ մեթոդներ, այդ թվում՝ Ուտքի գրոհՈ՞, քննարկման խմբեր, խմբային վարժություններ, դերախաղ, դեպքերի ուսումնասիրություն և այլն:

Ուսումնական մոդուլներ և նյութեր: ԾՄ-ն պետք է մշակի ուսումնական մոդուլներ և նյութեր, որոնք հիմնված կլինեն վերապատրաստվողների կարիքների գնահատման արդյունքների ու ԿԳԳ պահանջների վրա և կներառեն ԿԳԳ բոլոր համապատասխան կողմերը՝ հեշտացնելու բույսերի ու կենդանիների աճեցման ինտեգրված և կայուն համակարգերի որդեգրումը, ինչը հնարավորություն կտա երկարաժամկետ հեռանկարում:

- Ապահովել սննդամթերքի անվտանգության բարելավում,
- Բարելավել շրջակա միջավայրի որակը և բնական ռեսուրսների բազան, որից կախված է գյուղատնտեսությունը (էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսություն),
- Առավելագույնս արդյունավետ կերպով օգտագործել չվերականգնվող և ներտնտեսային ռեսուրսները և, անհրաժեշտության դեպքում, ինտեգրել բնական կենսաբանական ցիկլեր և վերահսկման համակարգեր,
- Առավելագույնս արդյունավետ կերպով օգտագործել ներտնտեսային և միջտնտեսային ենթակառուցվածքները,
- Պահպանել ֆերմերային տնտեսությունների գործունեության տնտեսական կենսունակությունը,
- Բարձրացնել ֆերմերների և ամբողջ հասարակության կյանքի որակը:

ՎՎ ավարտից հետո վերապատրաստվողները պետք է անցնեն հավաստագրում (ավարտական քննության միջոցով) և ստանան դասընթացը հաջողությամբ ավարտելու մասին հավաստագիր:

ՎՎ ավարտից հետո ԾՄ-ն պետք է կատարի հետդասընթացային գնահատում:

Դասընթացների կազմակերպում: Դասընթացները ժամանակային առումով սահմանափակ են, սակայն վերապատրաստողների ցանցի ստեղծման միջոցով կարելի է ապահովել դրանց հետևանքների պահպանումը: Յուրաքանչյուր համայնքում ԾՄ-ն պետք է կազմակերպի 5-օրյա դասընթաց: Դասընթացները պետք է տևեն օրական 6 ժամ: ԾՄ-ն մասնակիցների համար պետք է նախատեսի առնվազն մեկ սուրճի ընդմիջում: Դասընթացի անցկացման վայրը և ժամանակացույցը պետք է համաձայնեցվեն նախապես ընտրված մասնակիցների հետ՝ նրանց աշխատանքին չխանգարելու նպատակով:

Ընտրության չափանիշներ: ՎՎ արդյունավետությունն ու կայունությունն ապահովելու նպատակով ԾՄ-ն պետք է իրականացնի վերապատրաստվողների մանրակրկիտ ընտրություն՝ հիմնվելով ընտրության հետևյալ հիմնական չափանիշների վրա.

- Առնվազն 6 ամսվա ընթացքում ներգրավվածություն տեղական կառավարման կառույցների (քաղաքապետարան, գիտասփյուռ ծառայություններ և այլն), պետություն-մասնավոր հատված համագործակցության (քուլեջներ/համալսարան, մասնագիտական կրթության կենտրոններ, գիտասփյուռ ծառայության մասնավոր կենտրոններ և այլն) և դոնորների կողմից իրականացվող գյուղատնտեսական ծրագրերում և/կամ տեխնիկական խորհրդատվության և խորհրդատվական ծառայությունների տրամադրման բնագավառում,
- Մոտիվացվածություն և պատրաստակամություն մասնակցելու ՎՎ-ին և կատարելու Ծրագրի պահանջները հաճախումների և հավաստագրման վերաբերյալ:
- ՎՎ վերարտադրման ներուժ և կարողություն, հանձնառում ՎՎ ավարտից հետո իրենց համապատասխան բնագավառներում նախաձեռնել նմանատիպ վերապատրաստման դասընթաց/խորհրդատվություն:

ԾՄ-ն պետք է առավելագույնս ուշադրություն դարձնի ՎՎ դասընթացում կանանց ներգրավմանը՝ ապահովելով, որ վերապատրաստվողների առնվազն 20 %-ը լինեն կանայք:

ԾՄ-ն, հիմնվելով սեփական փորձի վրա, կարող է առաջարկել ընտրության լրացուցիչ չափանիշներ՝ վերապատրաստվողների ընտրությունն առավել թիրախային և ճշգրիտ դարձնելու նպատակով:

Յուրաքանչյուր համայնքում ԾՄ-ն պետք է ընտրի առնվազն 8-10 վերապատրաստվող:

VI. Աշխատանքներ

Խորհրդատուն/ծառայություն մատուցողը կարևոր դեր կխաղա Կայուն գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ ՎՎ իրականացման գործում՝ բարձրացնելով կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում ԵԳՖԱԾ-ի ներդրումների արդյունավետությունը և կայունությունը՝ փոխգործակցային կապեր ստեղծելով ծրագրային աշխատանքների միջև:

Ծրագիրը վերապատրաստվողներին պետք է ընտրի ընտրության չափանիշների հիման վրա, մշակի ՎՎ ծրագիր՝ հիմնվելով վերապատրաստվողների կարիքների վրա և իրականացնի համալիր ուսուցում՝ կայուն գյուղատնտեսության վերաբերյալ վերապատրաստվողների գիտելիքներն և գործնական հմտությունները բարելավելու համար:

Ակնկալվում է, որ ՎՎ մասնակիցները հանձն կառնեն դասընթացի ավարտից հետո նախաձեռնել նմանատիպ դասընթացներ/խորհրդատվություն իրենց գործունեության ոլորտներում՝ իրենց համապատասխան հաստատություններում և կազմակերպություններում համագյուղացիների և գործընկերների համար վերարտադրելով դասընթացը, ինչը կստեղծի ձևագնդի էֆեկտ և առաջ կբերի կուտակային փոփոխություններ:

Իրականացման բոլոր փուլերի արդյունքները ենթակա են ԳՏՁ ԾԻԳ-ի հաստատմանը՝ առաջադրանքի թափանցիկ և արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Խորհրդատուն/ծառայություն մատուցողը պետք է պահպանի ԳՁՄՀ-ի Սոցիալական, շրջակա միջավայրի և կլիմայի գնահատման ընթացակարգերը (SECAP¹) և հետևի դրանց պայմաններին, ինչպես նաև տեղական և ՀՀ օրենքներին ու կանոնակարգերին (սոցիալական և բնապահպանական երաշխիքներ):

ԳՏՁ ԾԻԳ-ի հետ լիարժեք համաձայնեցմամբ և վերջինիս հաստատմամբ՝ խորհրդատուն/ծառայություն մատուցողը պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները՝ հետևյալ փուլերով.

Ա. Շահառուների հայտնաբերում

ա. Մշակել, վերջնական տեսքի բերել և ԾԻԳ-ի հետ համաձայնեցնել առաջադրանքի իրականացման մեթոդաբանությունն ու աշխատանքների ժամանակացույցը,

բ. Առկա բոլոր զեկույցների/հրապարակումների, կատարված նախորդ ուսումնասիրությունների և ԳՏՁ ԾԻԳ-ում հասանելի տեղեկությունների տեսական ուսումնասիրություն,

գ. Գյուղատնտեսության ոլորտում տեխնիկական խորհրդատվության և խորհրդատվական ծառայությունների բնագավառում գործող և/կամ համայնքում լայնամասշտաբ ազդեցությամբ գյուղատնտեսական-բնապահպանական ծրագրեր իրականացնող կառույցների, հաստատությունների և կազմակերպությունների տվյալների հավաքագրում և քարտեզագրում: Քարտեզագրումը պետք է լինի մասնակցային՝ ներառելով համայնքներում ակտիվ շահագրգիռ բոլոր կողմերի տեսակետները,

դ. Իրազեկության բարձրացման արշավի իրականացում՝ ՎՎ-ի վերաբերյալ տեղեկությունների տարածման միջոցով,

¹ <https://www.ifad.org/en/document-detail/asset/39563472>

ե. Իրազեկության բարձրացման վերաբերյալ նյութերի մշակում և տարածում հայտնաբերված հավանական շահառուների շրջանում:

Բ. Շահառուների ընտրություն

ա. Վերապատրաստման հավանական մասնակիցների հայտնաբերում (երկար ցուցակ),
բ. Ընտրության համար շահառուների առաջադրում (յուրաքանչյուր համայնքից առնվազն 8-10 վերապատրաստվող)՝ խորհրդակցելով տեղական համայնքների պաշտոնական ներկայացուցիչների, համապատասխան ոլորտում գործող դերակատարների հետ և հետևելով առաջադրանքի թիրախավորման ընդհանուր մոտեցմանը, հստակ հիմնավորումներ ներկայացնելով Շահառուների ընտրության վերաբերյալ մանրամասն հաշվետվությունում:

Շահառուների ընտրության հաշվետվությունը պետք է ներառի 2-3 էջ ծավալով բնութագիր յուրաքանչյուր շահառուի համար, ընտրված Շահառուների համառոտ ցուցակը՝ ըստ համայնքի, ներառյալ՝ անուններ, հասցեներ, աշխատավայր, ՎՎ վերարտադրման ներուժ և այլն:

Գ. Կարիքների գնահատում և ուսումնական նյութերի մշակում

ա. Վերապատրաստվողների ընտրության ավարտից հետո յուրաքանչյուր խմբի համար **Վերապատրաստման կարիքների գնահատման** անցկացում, որի արդյունքում կորոշվեն լսարանի գիտելիքների մակարդակը, հիմնական բացերը և գիտելիքների բարձրացման կարիքները,

բ. Դասընթացների անցկացման մեթոդաբանության մշակում (պետք է նախապես ներկայացվի ԳՏՏԶ ԾԻԳ-ին),

գ. ՎՎ անցկացման համար հանգամանալից ուսումնական նյութերի մշակում (պետք է նախապես ներկայացվի ԳՏՏԶ ԾԻԳ-ին),

դ. ՎՎ մանրամասն ուսումնական ծրագրի մշակում և ՎՎ անցկացման վայրի ու ժամկետի վերաբերյալ վերապատրաստվողների համաձայնության ստացում,

ե. ՎՎ նյութերի (թղթային և էլեկտրոնային տարբերակներով) տրամադրում վերապատրաստվողներին նախքան ՎՎ մեկնարկը:

Դ. Վերապատրաստում

➤ Վերապատրաստումը պետք է նախատեսված լինի յուրաքանչյուր համայնքում 5 օրվա ընթացքում անցկացման համար և պետք է տևի օրական 6 ժամ՝ առնվազն մեկ սուրճի ընդմիջմամբ:

ա. Վերապատրաստման կազմակերպական մասի վերջնականացում,

բ. Վերապատրաստման անցկացում՝ համաձայն հաստատված ՎՎ ժամանակացույցի և մեթոդաբանության,

գ. Վերապատրաստման ավարտից հետո վերապատրաստվողների հավաստագրման գործընթացի իրականացում,

դ. Հաջողությամբ անցած մասնակիցներին ավարտական հավաստագրերի հանձնում,

ե. Դասընթացի ավարտից հետո հետդասընթացային գնահատման անցկացում:

Խորհրդատուն/ծառայություն մատուցողը չի կարող մեկ փուլից մյուսին անցնել նախքան ԳՏՏԶ ԾԻԳ-ից անվերապահ հաստատում ստանալը:

VII. Տևողություն, ներկայացման ենթակա փաստաթղթեր և ներկայացման ժամկետներ

Առաջադրանքի տևողությունը 5 ամիս է: Ստորև նշվում են ներկայացման ենթակա հիմնական փաստաթղթերի ցանկը և ժամկետները.

Ներկայացման ենթակա փաստաթուղթ	Ներկայացման ժամկետ (մեկնարկից սկսած)
Մեկնարկային հաշվետվություն՝ մանրամասն մեթոդաբանությամբ և աշխատանքների ժամանակացույցով (անգլերեն և հայերեն)	Պայմանագրի շնորհումից 10 օր հետո
Շահառուների հայտնաբերման և իրազեկման հաշվետվություն	1 ամիս
Շահառուների ընտրության հաշվետվություն	1.5 ամիս
Վերապատրաստման նյութեր	2.5 ամիս
Առաջընթացի ամփոփ հաշվետվություն ՎՎ վերաբերյալ	Շաբաթական կտրվածքով՝ ՎՎ մեկնարկից սկսած
Վերջնական հաշվետվություն (անգլերեն և հայերեն)	5 ամիս

Պահանջվող հաշվետվությունները, ըստ անհրաժեշտության, կարող են ճշգրտվել՝ ըստ ԳՏՏԶ ԾԻԳ-ի հետ նախապես ձեռք բերված փոխհամաձայնության և ԾԻԳ-ի առարկության բացակայության դեպքում: Սույն առաջադրանքի ընթացքում խորհրդատուն/ծառայություն մատուցողն ուղղակիորեն հաշվետու կլինի ԳՏՏԶ ԾԻԳ-ի կողմից լիազորված Համակարգողներին: Ի լրումն ՍՆերկայացման ենթակա փաստաթղթերում նշված հաշվետվության հիմնական պահանջների՝ խորհրդատուն/ծառայություն մատուցողը պետք է տրամադրի շաբաթական առաջընթացի ամփոփ հաշվետվություններ, որոնցում ներկայացված կլինեն ընթացիկ և նախատեսվող ծրագրված

աշխատանքների կարգավիճակը, ինչպես նաև ծագած խնդիրները՝ առաջարկվող լուծումների հետ միասին:

Անհրաժեշտության դեպքում ԳՏՏԶ ԾԻԳ-ի պաշտոնական պահանջով խորհրդատուի/ ծառայություն մատուցողի՝ Ծրագրի իրականացմանն առնչվող գործունեությունը պետք է անցնի առույտ: Վերոնշյալ հաշվետվությունները ներառում են ներկայացման ենթակա բոլոր փաստաթղթերը, որոնք հանգամանորեն ներկայացված են ԱՊ-ում նշված աշխատանքների համապատասխան ցանկում:

Խորհրդատու/ծառայություն մատուցողը պետք է կիրառի ժամանակակից տեխնոլոգիաներ և տեղեկատվական համակարգեր մոնիտորինգի, վերահսկողության, աջակցության, տվյալների հավաքագրման, կատարողականի գնահատման և այլ աշխատանքների կատարման ընթացքում:

VIII. Փորձագետներ (բոլոր փորձագետների համար գնահատվում է 17 մարդ/ամիս)

Խորհրդատուն պետք է ներգրավի հետևյալ հիմնական փորձագետներին.

Ա. Թիմի ղեկավար

- ա. Առնվազն 15 տարվա ընդհանուր մասնագիտական փորձ.
- բ. Ծրագրերում թիմերի կառավարման առնվազն 5 տարվա փորձ.
- գ. Հայաստանում զարգացման և վերապատրաստման ծրագրերի մշակման և իրականացման առնվազն 7 տարվա փորձ.
- դ. Դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի կառավարման փորձ.
- ե. Անգլերենի և հայերենի գերազանց իմացություն.
- զ. Հաղորդակցման, համակարգման, առաջնորդության և խնդիրների լուծման գերազանց հմտություններ.
- է. Առնվազն մագիստրոսի կամ համալսարանական համարժեք աստիճան համապատասխան բնագավառում:

Բ. Վերապատրաստման առաջատար մասնագետ, ագրոնոմ

- ա. Առնվազն 10 տարվա ընդհանուր մասնագիտական փորձ,
- բ. Առնվազն 5 տարվա փորձ Հայաստանում ագրոպարենային արտադրության կամ կայուն գյուղատնտեսության ոլորտում վերապատրաստման դասընթացների մշակման և անցկացման բնագավառում,
- գ. Հայաստանի գյուղական վայրերում աշխատանքի առնվազն 2 տարվա փորձը կղիտվի որպես առավելություն,
- դ. Հայերենի և անգլերենի գերազանց իմացություն (անգլերեն իմացությունը պահանջվում է կայուն գյուղատնտեսության վերաբերյալ միջազգային փորձի պահանջներին համապատասխանությունը և գիտելիքների փոխանակումն ապահովելու համար),

ե. Հաղորդակցման, համակարգման և շնորհանդեսների ներկայացման գերազանց հմտություններ,

զ. Առնվազն բակալավրի կամ համալսարանական համարժեք աստիճան համապատասխան բնագավառում: Համապատասխան ոլորտում մագիստրոսի աստիճանը կդիտվի որպես առավելություն:

Գ. Վերապատրաստման առաջատար մասնագետ, շրջակա միջավայրի մասնագետ

ա. Առնվազն 10 տարվա ընդհանուր մասնագիտական փորձ,

բ. Առնվազն 5 տարվա փորձ շրջակա միջավայրի (կլիմայի փոփոխություն, մեղմում և հարմարվողականություն, կանաչ տնտեսություն և այլն) վերաբերյալ

վերապատրաստման դասընթացների մշակման և անցկացման բնագավառում,

գ. Հայաստանի գյուղական վայրերում աշխատանքի առնվազն 2 տարվա փորձը կդիտվի որպես առավելություն,

դ. Հայերենի և անգլերենի գերազանց իմացություն (անգլերեն իմացությունը պահանջվում է կայուն գյուղատնտեսության և շրջակա միջավայրի կայունության վերաբերյալ միջազգային փորձի պահանջներին համապատասխանությունը և գիտելիքների փոխանակումն ապահովելու համար),

ե. Հաղորդակցման, համակարգման և շնորհանդեսների ներկայացման գերազանց հմտություններ,

զ. Առնվազն բակալավրի կամ համալսարանական համարժեք աստիճան համապատասխան բնագավառում: Համապատասխան ոլորտում մագիստրոսի աստիճանը կդիտվի որպես առավելություն:

Դ. Սոցիալ-տնտեսագիտության առաջատար մասնագետ

ա. Առնվազն 10 տարվա փորձ սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում.

բ. Տեխնիկական աջակցության կամ ծրագրի իրականացման առնվազն 5 տարվա փորձ սոցիալ-տնտեսական ոլորտում.

գ. Կարիքների վերլուծության հետազոտությունների անցկացման և մոնիտորինգի ու գնահատման առնվազն 3 տարվա փորձ,

դ. Հայերենի գերազանց իմացություն, անգլերենի լավ իմացությունը կդիտվի որպես առավելություն,

ե. Հաղորդակցման, համակարգման, առաջնորդության և խնդիրների լուծման գերազանց հմտություններ,

զ. Առնվազն բակալավրի կամ համալսարանական համարժեք աստիճան համապատասխան բնագավառում: Համապատասխան ոլորտում մագիստրոսի աստիճանը կդիտվի որպես առավելություն:

Բացի այդ, խորհրդատու/ծառայություն մատուցողը պետք է ներգրավի անհրաժեշտ որակավորմամբ և թվով կարճաժամկետ փորձագետների՝ ծրագրի հաջող իրականացումն

ապահովելու համար: Անհրաժեշտության դեպքում կարճաժամկետ հիմունքներով պետք է ներգրավվեն առնվազն հետևյալ մասնագետները՝

- Վերապատրաստող դասընթացավարներ.
- Մոնիտորինգի և գնահատման մասնագետներ.
- Ագրոպարենային/ագրոնոմիական շուկայի մասնագետներ:

IX. ՀԱՎԵԼՎԱԾ I. ՈԲՓՄՆ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Մարզ	Համայնք
Անվանում	Անվանում
Սյունիք	Ագարակ
	Ալվանք
	Կարճևան
	Լեհվազ
	Մեղրի
	Շվանիձոր
	Նոնաձոր
Վայոդ ձոր	Ռիինդ
Լոռի	Դսեղ
Գեղարքունիք	Վարդենիկ
	Ծովինար
	Նորատուս
Շիրակ	Հոռոմ
ԸՆԴԱՄԵՆԸ	13